Co-funded by the European Union

Միգրացիայի կառավարման համակարգի հզորացումը Հայաստանի Հանրապետությունում

Միգրանտների եւ փախստականների  տարբեր խմբերի կայուն սոցիալական  ծառայությունների տրամադրում  Հայաստանի Հանրապետությունում

# ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության անունը:  Երիտասարդական գաղափարներ ԵՀԿ

Ծրագրի անունը: Ինտեգրում և բարգավաճում։ Աջակցություն Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց Հայաստանում

Հաշվետու ժամանակահատվածը: *01.08.2024-31.01.2025*

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը։

Հաշվետվությունը ներկայացրեց (անուն, ազգանուն, պաշտոն): Շուշանիկ Սահակյան, ծրագրի ղեկավար

Ստորագրություն

ամսաթիվ 20.02.2025

## 1. Ծրագրի իրականացման և դրա արդյունքների գնահատում

### 1.1. Ամփոփում

Ներկայացրեք հաշվետու ժամանակաշրջանում ծրագրի իրականացման ամփոփումը (առավելագույնը կես էջ): Վերջնական հաշվետվության դեպքում ամփոփումը պետք է ներառի գործողության իրականացման ողջ ժամանակահատվածը:

«Ինտեգրում և բարգավաճում։ Աջակցություն Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց Հայաստանում» ծրագիրը սկսել է 2024 թվականի օգոստոսի 1-ին, 6 ամսյա ժամկետով: Ծրագիրը, ունենալով հիմնականում սոցիալական ուղղվածություն, առաջնային լուծեց Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և Դիլիջանում վերաբնակեցված անձանց ինտեգրվելու խնդիրը և բարելավեց բարեկեցության մակարդակը: Շահառուները ձեռք բերեցին ապահովվածության զգացում, որն իրենից ենթադրում է անորոշ, անհասկանալի իրավիճակներում ունենալ հենարան, որը կարող է իր ուժերի ներածի չափով օգնության ձեռք մեկնել: Արդեն իսկ ունենալով միգրանտների հետ աշխատանքի փորձառություն՝ մեր կազմակերպության համար սահուն ստացվեց շահառուների ներգրավումը և վստահության շահումը: Ունենալով նախապես վեր հանած խնդիրներ՝ մեր ծրագրային բաղադրիչներ սահմանեցինք հոգեբանական, իրավական, մշակութային ինտեգրման, տնտեսական զարգացմանն ուղղված աշխատանքները (յուրաքանչյուր բաղադրիչի արդյունքները ներկայացված են ստորև ներկայացված մյուս հարցերում):

Ամփոփելով 6 ամսյա տվյալները՝ կարող ենք նշել, որ կարիքները որոշ առումով փոփոխվել են՝

1. Էապես նվազել է ինտեգրման խնդիրը,

2. Հոգեբանական խնդիրների բնույթը փոխվել է, նախնական շրջանում կար անհրաժեշտություն տրավմաների, տագնապի, սթրեսի, վախերի, դեպրեսիայի հետ աշխատանքի, այժմ բարձրացել է հոգեբանական ընդհանուր բարեկեցության բարձրացման և զորեղացման անհրաժեշտությունը, նաև այցելուները նշում էին արտթերապիայի անհրաժեշտությունը,

3. Մասամբ փոխվել են իրավաբանական խնդիրները, շեշտը այժմ դրվում է բնակապահովման և քաղաքացիություն ձեռք բերման հարցերի վրա,

4. Տնտեսական զորեղացման հարցը մնում է արդիական, քանի որ տեղի բնակչությունը նույնպես ունի աշխատանքի ապահովման, տնտեսական զորեղացման պահանջ:

### 1.2. Գործողություններ և արդյունքներ

- Ներկայացնել ծրագրի շրջանակում կատարված գործողությունների բնութագիրը՝ նկարագրելով տրամադրվող ծառայությունների շրջանակը, կատարման մեթոդաբանությունը, ծառայությունների մատչելիության և ներառականության ապահովմանն ուղղված քայլերը՝ նշելով թե որքանով են դրանք նպաստում շահառու խմբերի սոցիալական կարիքների բավարարմանը: (առավելագույնը՝ 500 բառ)։

6 ամսյա ժամանակահատվածում աշխատել ենք մոտ 200 շահառուի հետ (ընդհանուր 1080 այց), որոնցից 35 %-ը արական սեռի ներկայացուցիչ, 65%՝ իգական սեռի ներկայացուցիչ, հաշվի առնելով, որ

Դիլիջանում այժմ կա Արցախից բռնի տեղահանված 500 անձ՝ աշխատել ենք Դիլիջանի արցախցիների 40%-ի հետ: Ծրագրի մեկնարկից առաջ իրականացրել էինք կարիքների գնահատում, որի արդյունքում վեր էինք հանել այն խնդիրները, որոնց համար ծրագրի շրջանակում փորձեցինք լուծումներ առաջարկել:

2024 թվականի հուլիս ամսվանից սկսեցինք ծրագրի նախապատրաստական աշխատանքները՝ համագործակցային նոր կապեր հաստատելով անհրաժեշտ կառույցների և անձանց հետ (Դիլիջանի ՄՍԾ-ի, ՏԻՄ-ի, ծրագրի աշխատակազմի, փորձագետների հետ):

Օգոստոս ամսին իրականացրինք լուսաբանում և մեկնարկեցինք աշխատանքները, առաջին աշխատանքային ամսվա ընթացքում միայն մատուցում էինք իրավաբանական աջակցություն, որն իր մեջ մինչև ծրագրի ավարտ ներառեց ուղղորդում տարբեր պետական մարմիններ, իրավաբանական խորհրդատվություն, փաստաթղթերի հավաքագրում, օրենքներին ծանոթացում, անձնական դատական հայցերի հետ աշխատանք: Այցելուների այցերը եղել են բազմանգամյա,այժմ էլ ունենք այցելուներ, որոնց ծառայությունը դեռ ընթացքի մեջ է, ծրագրի ավարտից հետո դեռևս շարունակելու ենք աշխատանքները: Իրավաբանական աջակցության մեթոդաբանության կարևոր բաղադրիչն է յուրաքանչյուր ծառայություն իր վերջնական կետին հասցնելը:

Սեպտեմբեր ամսվանից մեկնարկեցինք հոգեբանական ծառայությունները, հոգեբանը աշխատում էր 3 հիմնական ուղղությամբ, հոգեբանական անհատական խորհրդատվություն, արտթերապիա, ուսումնասիրությունների և աշխատանքների ուսումնասիրման փուլ: Աշխատանքների շրջանակում եղել են՝ տագնապը, վախերը, սթրեսը, դեպրեսիան, ագրեսիան և այլ հոգեբանական խնդիրներ: Եվ՛ իրավաբանը, և՛ հոգեբանը դեկտեմբեր, հունվար ամիսներին աշխատել են ավելի խիտ գրաֆիկով, քանի որ բնակապահովման ծրագիրն սկսվեց հունվարին, ինչպես նաև դեկտեմբերից կառավարության կողմից սկսվել էր աջակցության նոր ծրագիր, իսկ հոգեբանի աշխատանքների խտացումը պայմանավորված էր 2 երեխայի մոտ սուր հոգեբանական խնդրի բացահայտմամբ: Նրանց հետ աշխատանքը կշարունակվի ծրագրի ավարտից հետո:

Օգոստոս-սեպտեմբեր ամիսների ընթացքում աշխատել է նաև աջակցության խմբի ղեկավարը, ով կատարել է կարիքների գնահատում, որի հիման վրա նախաձեռնել ենք այլ ծրագրեր շահառուների խնդիրների լուծման համար:

Հոկտեմբերի սկսվեց մշակութային ինտեգրման ծառայությունը, որի շրջանակում ունեցանք սեմինարներ, այլ մշակութային միջավայրում հարմարվելու կարողությունների զարգացման վրա, սեփական մշակույթի պահպանման ուղղությամբ, այս թեմաները մատուցվել են պրակտիկ աշխատանքներով՝ ուսումնասիրելով գրականություն, բեմադրելով դերային խաղեր, բարբառի ուսումնասիրություն, ձեռագործ աշխատանքներ, կարպետագործություն, բատիկի պատրաստում, մշակութային ինտեգրման աշխատանքների ավարտին կազմակերպեցինք կինոդիտում՝ ներկայացնելով փիլմ, որտեղ երիտասարդները պատմում են Արցախի շրջանների մասին: Անավարտ աշխատանքները ավարտելուց հետո աշխատանքները կամբողջականացվեն և կկազմակերպվի ցուցադրություն:

Դեկտեմբեր և հունվար ամիսներին կազմակերպեցինք բիզնես դասընթացներ, որի արդյունքում ունեցանք 25 բիզնես պլաններ, որոնց ֆինանսավորման համար հիմա ակտիվորեն փնտրում ենք դրամաշնորհային ծրագրեր: Կազմակերպեցինք նաև ֆինանսական գրագիտության դասընթացներ, որի արդյունքում մասնակիցները ծանոթացան բիզնեսի գրանցման առանձնահատկություններին, հարկային առանձնահատկություններին, բանկային քարտերի տարբերություններին, օնլայն բանկինգին, ֆինանսական զեղծարարություններից պաշտպանվելու միջոցներին, ինքնակենսագրականների կազմելուն և զբաղվածության ապահովմանը:

Ծրագրերի շահառուներ են հանդիսացել ոչ միայն Դիլիջան քաղաքում ապրող Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված արցախցիները, այլ նաև Դիլիջանի համայնքապատկան գյուղերում ապրող արցախցիները, որոնց ուղևորափոխադրման ծախսերը տրամադրել ենք ծրագրի ֆինանսավորմամբ:

Աջակցության ծառայությունների մեթոդաբանական առանցքը վերջնարդյունք ունենալն է, որը որոշ բաղադրիչների դեպքում արդեն իսկ պատրաստ է, իսկ որոշների դեպքում աշխատանքը շարունակվելու է ծրագրի ավարտից հետո:

- Ներկայացնել ազգային, մարզային և համայնքային մակարդակում գործընկերների և շահագրգիռ կողմերի հետ տարվող աշխատանքները՝ նրանց ներգրավման, աջակցման և ծառայությունների տրամադրման շարունակականության ապահովման տեսանկյունից: Ինչպե՞ս եք գնահատում այդ հարաբերությունները (ներկայացնել փաստարկներ): (առավելագույնը՝ 300 բառ)

Գործընկերների և շահագրգիռ կողմերի ներգրավում

Ծրագրի շրջանակում համագործակցություն է հաստատվել բազմաթիվ պետական, միջազգային և տեղական կառույցների, կազմակերպությունների և ընկերությունների հետ, այդ թվում՝

- Պետական մարմիններ՝ Հայաստանի աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Տավուշի մարզպետարան, Դիլիջանի համայնքապետարան և Դիլիջանի կադաստրային, վիճակագրական, զագսի, նոտարական, հաշվապահական և անձնագրային գրասենյակներ:
- Միջազգային կազմակերպություններ՝ ՄԱԿ-ի Միգրացիոն միջազգային կազմակերպություն, Կարմիր խաչի միջազգային կազմակերպություն:
- Կրթական հաստատություններ՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ, Դիլիջանի դպրոցներ և պետական քոլեջ, Սոցիալական աշխատողների ասոցիացիա հկ, Տահույս հկ, Դիլիջանի գեղարվեստի դպրոց, Դիլիջանի նախկին գիշերօթիկ դպրոց
- Համայնքային և մասնավոր սեկտոր՝ «Ծիրան» սուպերմարկետ, «Նյու սիթի» սուպերմարկետ, «Համով անկյուն» փուդկորտ, բանկեր (ID բանկ, Ամերիա բանկ, Արդշին բանկ), հիվանդանոցներ, պոլիկլինիկա, դեղատներ, մասնավոր ատամնաբուժարաններ:

Այս ներգրավումը իրականացվել է տեղեկատվության փոխանակման, համագործակցության շրջանակների որոշման և համատեղ գործողությունների միջոցով:

Աջակցության ապահովում

Գործընկերների հետ աշխատանքը ներառել է աջակցման լայն շրջանակ՝

- Տեղեկատվության և փորձի փոխանակում՝ գործընկերների ներգրավմամբ լուծումներ գտնելու նպատակով:
- Ուղղորդում և աջակցության կազմակերպում՝ տեղահանված անձանց համար:
- Նոր կապերի հաստատում, որոնք նպաստել են աշխատանքի տեղավորման, կրթությունից դուրս մնացած երեխաների փաստաթղթերի հավաքագրման և նրանց կրթական հաստատությունների հետ կապ հաստատելու հարցերում:
- Բիզնես ծրագրերում ներգրավման աջակցություն և տեղական կազմակերպությունների հետ ծանոթացում՝ հետագա համագործակցության համար:

Ծառայությունների տրամադրման շարունակականության ապահովում

Ծրագրի իրականացման ընթացքում մշակվել են համագործակցության երկարատև մեխանիզմներ, որոնք ներառում են՝

- Համագործակցային ցանցի ընդլայնում և հաստատված կապերի զարգացում:
- Գործընկերների ծանոթացում մեր ծրագրերի հետ՝ ապահովելով նրանց հետագա ներգրավվածությունը:
- Լուսաբանում և ծրագրի արդյունքների հանրայնացում, ինչը կնպաստի համայնքային ներգրավվածության մեծացմանը:

- Ինչպե՞ս եք գնահատում Ձեր հարաբերությունները շահառուների հետ (տրամադրեք մանրամասն տեղեկատվություն/փաստարկներ)։ Ինչպե՞ս եք նրանց ներգրավում։ (առավելագույնը 200 բառ)

Մեր հարաբերությունները շահառուների հետ կարելի է գնահատել որպես արդյունավետ, վստահելի և փոխադարձորեն հարգալից։ Շատ շահառուներ մշտական կապի մեջ են մեզ հետ՝ հաճախակի դիմելով տարբեր հարցերով, ինչպիսիք են տեղեկատվության տրամադրումը, օգնության ցուցաբերումը կամ ուղղորդումը։ Նրանք վստահում են մեր թիմին, ինչը հնարավորություն է տալիս ավելի արագ արձագանքելու նրանց կարիքներին ու խնդիրներին։ Քանի որ մենք արցախցիների հետ գործունեություն ենք ծավալում 2020 թվականից ի վեր, նրանց մեծ մասը Դիլիջան գալով արդեն իսկ տեղյակ է լինում մեր գործունեության մասին։

Վստահության ապացույցը նաև այն է, որ մեր շահառուների մի մասը մեզ գտնում է մյուս շահառուների ուղղորդմամբ։ Շատ հաճախ մենք տեսնում ենք, որ մեր շահառուներն առաջարկում են մեր ծառայությունները իրենց ծանոթներին կամ բարեկամներին, որոնք, մինչ այդ, մեր ծրագրի մասին չգիտեին, ինչն էլ փաստում է այն մասին, որ նրանք վստահում են մեր աշխատանքին։ Օրինակ՝ մեր շահառուներից մեկը ծանոթանալով մեր հետ, իր ընտանիքի բոլոր անդամներին ներառել է տարբեր ծառայությունների մեջ, նա գրեթե ամենօրյա ռեժիմով կապի մեջ է մեզ հետ, ծանոթացրել է իր ազգականներին  և ընկերներին, ովքեր նույնպես դարձել են մեր շահառուները, նա պարբերաբար տեղեկատվություն է տալիս Դիլիջանից տեղափոխվող և Դիլիջան եկող արցախցիների մասին։ Սա ցույց է տալիս, որ մեր ծառայությունները հարգանք և վստահություն են առաջացնում շահառուների շրջանում, ինչը մեծացնում է նրանց ակտիվ ներգրավվածությունը մեր ծրագրերին։

Նրանց ներգրավման գործընթացը հիմնականում տեղի է ունենում անմիջական շփումների միջոցով, սակայն մենք նաև պարբերաբար իրականացնում ենք կարիքների գնահատում, խմբեր ձևավորում և սոցիալական մեդիայում մասնակցություն, ինչը լրացուցիչ հնարավորություն է տալիս շահառուներին կապի մեջ լինել մեզ հետ։

- Ներկայացնել տրամադրված ծառայությունների հիմնական քանակական և որակական արդյունքները։ Ներկայացնել, թե ինչպիսի՞ ազդեցություն ունեն տրամադրվող սոցիալական ծառայությունները թիրախ խմբերի/շահառուների/շահագրգիռ կողմերի վրա, և ինչպե՞ս ու ինչքանո՞վ է բարելավել ծրագրի թիրախ հանդիսացող խմբերի և շահառուների ներկայիս իրավիճակը։ (առավելագույնը՝ 200 բառ)



Ծրագրի շրջանակներում տրամադրվել են մի շարք կարևոր ծառայություններ, որոնցից յուրաքանչյուրն ունեցել է իր ազդեցությունը թիրախ խմբերի վրա՝ նպաստելով նրանց սոցիալական, հոգեբանական և իրավաբանական աջակցության բարելավմանը:

6 ամսվա աշխատանքի ընթացքում ունեցել ենք 1080 այց Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված, Դիլիջանում բնակեցված արցախցիների կողմից: Շահառուներից շատերը այցելել են մեզ մի քանի անգամ, տարբեր խնդիրներով, ընդհանուր առմամբ աշխատել ենք 200 արցախցիների հետ:

- <u>Բիզնես դասընթացներ և ֆինանսական գրագիտության ուսուցում(28.1%)</u>: Այս դասընթացները նպաստել են շահառուների տնտեսական կայունությանը՝ օգնելով կազմել բիզնես պլաններ և ձեռք բերել ֆինանսական գրագիտություն:
- <u>Իրավաբանական խորհրդատվություն(7.8%)</u>: Մեր իրավաբանը օգնել է Արցախից տեղահանվածներին՝ պետական մարմիններին դիմումների կազմման, դատական հարցերի և փաստաթղթավորման գործընթացում, ինչպես նաև ուղղորդում դեպի տարբեր պետական մարմիններ:
- <u>Հոգեբանական աջակցություն և արտթերապիա(18.6%)</u>: Նպաստել ենք շահառուների հոգեբանական կայունությանը և վերականգնմանը՝ տրամադրելով անհատական խորհրդատվություն և ստեղծագործական մոտեցումներ:
- <u>Մշակութային ինտեգրում(21.6%)</u>: Մշակութային միջոցառումների (նկարչություն, գրականություն, կինոդիտումներ) և սեմինարների շնորհիվ խթանել ենք ներգրավվածությունը և հարմարվողականությունը:
- <u>Այլ ծառայություններ(23.9%)</u>: Ծրագրի շրջանակում աջակցության խմբի ղեկավարի կողմից պարբերաբար կատարած մշտադիտարկումների արդյունքից ելնելով իրականացրել ենք կողմնակի այլ աջակցություններ, ներառելով մեր կազմակերպության ռեսուրսները և մեր համագործակիցների աջակցությունը: Արցախցի երիտասարդներին ուղարկել ենք ճամբարներ, ուղղորդել ենք Դիլիջանի SKYE երիտասարդական ակումբ, աշխատանքի տեղավորում, դեղորայքային աջակցություն, սննդի աջակցություն, մանկական կերի աջակցություն, դասապատրաստում, ժամանցի ապահովում և այլ աջակցություններ:

Այս ծառայությունների շնորհիվ բարելավվել են շահառուների կյանքի որակը, սոցիալական հարմարվողականությունը և ինքնավստահությունը՝ նպաստելով նրանց ընդհանուր կայունացմանը:

- Մանրամասն նկարագրել, թե ինչպես եք ապահովում տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի ապահովման նվազագույն սկզբունքները: Նկարագրեք ձեր մասնագիտական ներուժը: (առավելագույնը՝ 150 բառ)

Մեր աշխատանքների մեծ մասը կապված է սոցիալական ոլորտի հետ, որը ենթադրում է սերտ համագործակցություն Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի հետ, աշխատում ենք՝ համատեղելով «Երիտասարդական գաղափարներ» ԵՀԿ-ի և ՄՍԾ ՏԿ-ի փորձը և ռեսուրսները, պարբերաբար ունենում ենք հանդիպումներ և զանգեր՝ փորձի փոխանակման, հարցերի առաջացման դեպքում:

Մեր աշխատանքում կարևոր բաղադրիչ է մոնիտորինգի իրականացումը, որը կազմակերպվում է երկու ամիս պարբերաշրջանով: Մոնիտորինգը ներառում է աջակցության խմբերի ներգրավում, որոնց միջոցով.

1. Վերլուծում ենք շահառուների կարիքները,
2. Ստեղծում ենք թիրախային ծրագրեր՝ հիմնված ստացված արդյունքների վրա:

Ծրագրի ղեկավարը ունի սոցիալական աշխատանքի փորձ, որը հնարավորություն է տվել սոցիալական աշխատանքի հետ կապված հարցերը լուծել ավելի հեշտ:

## 2. Մշտադիտարկում, տեսանելիության ապահովում և շարունակականություն

- Մանրամասն նկարագրել, թե ինչպե՞ս է իրականացվում ծրագրի մշտադիտարկումը։ (առավելագույնը՝ 150 բառ)

Ծրագրի մշտադիտարկումը հիմնված էր նախնական կարիքների գնահատման վրա, որը ծառայեց որպես հիմք հետագա արդյունքների համեմատության համար: Նախ մշակվել էր շահառուների տվյալների բազա, որը շարունակաբար թարմացվում էր ծրագրի ընթացքում:

Մշտադիտարկման մեթոդները ներառում էին՝

- Առցանց հարցումներ՝ պարբերաբար իրականացվել են հարցումներ շահառուների կարիքները հասկանալու և դրանք արդիականացնելու նպատակով:
- Տվյալների թարմացում այլ աղբյուրներից՝ շահառուների ցանկը թարմացվել է զանգերի միջոցով և շահառուներից կամ այլ անձանցից ստացված տեղեկատվության հիման վրա:
- Վերջնական գնահատում՝ ծրագրի ավարտին կատարվել է ամփոփիչ հարցում, որի ընթացքում շահառուները գնահատել են ծրագրի 6-ամսյա աշխատանքն ու ներկայացրել հետագա կարիքները:

Այս մշտադիտարկման արդյունքում ծրագրի արդյունավետությունը շարունակաբար վերանայվել է, իսկ ստացված տվյալները հիմք են հանդիսացել նոր ծրագրերի պլանավորման համար:

Մշտադիտարկում իրականացրել ենք նաև աշխատանքային գործողությունների դիտարկման համար, մշտադիտարկումների արդյունքում կատարել ենք մի քանի փոփոխություններ. աշխատանքային պլանի փոփոխություն՝ հիմնված ձևավորված խմբի տարիքով, տեղեկատվության մատչելիության ապահովում, կազմակերպչական հարցերի բարելավում և այլ խնդիրներ, որոնք ներառված են մշտադիտարկման թերթիկներում:

- Նշել այն դժվարությունները, որոնց հանդիպել եք ծրագրի իրականացման ընթացքում և առաջարկություններ, որոնք կդիտարկվեն ծրագրի իրականացման հաջորդ փուլում։ (առավելագույնը՝ 500 բառ)

<u>Աշխատանքը զոհի հոգեբանությամբ անձանց հետ</u>

- Դժվարություն: Ծրագրի շահառուների որոշ մասը ցուցաբերում էր զոհի հոգեբանություն՝ ոչ մի կերպ չցանկանալով ջանքեր գործադրել իրենց վիճակը բարելավելու համար: Հոգեբանական աջակցության շրջանակում փորձ էր արվում լուծել այս խնդիրը, սակայն ոչ բոլորն էին մասնակցում այդ ծառայություններին:
- Առաջարկություն: Առաջիկայում առաջարկվում է անցկացնել տեղեկատվական արշավներ՝ ուղղված ինքնազարգացման կարևորության գիտակցմանը: Բացի այդ, պետք է կազմակերպել հաջողված բիզնես պլանների պատմությունների լուսաբանում՝ ցույց տալու համար, թե ինչպես կարելի է ինքնուրույն հաղթահարել դժվարությունները և հասնել հաջողության։

<u>Նյութական օգնության ակնկալիք</u>

- Դժվարություն: Շահառուներից շատերը նախընտրում էին նյութական օգնություն (գումար, սնունդ, հագուստ, դեղորայք), ինչը նվազեցնում էր նրանց ինքնուրույն ջանքեր գործադրելու մոտիվացիան: Սա

հատկապես նկատելի էր դասընթացների շահառուների թվի համեմատությամբ, որը ցածր էր նյութական օգնություն ստացողների թվից:

- Առաջարկություն: Պետք է ավելի շատ շեշտադրել ինքնազարգացման ու ինքնուրույնության կարևորությունը՝ դասընթացների և վերապատրաստումների միջոցով: Նպատակահարմար կլինի նաև ընդլայնել հաջողված դեպքերի պատմությունների ներկայացումը՝ ոգեշնչելու շահառուներին ակտիվորեն ներգրավվել ծրագրի շրջանակներում:

<u>Պետական մարմինների հետ խնդիրները շահառուների կողմից</u>

- Դժվարություն: Որոշ շահառուներ ծրագրի հետ շփվելիս իրենց դժգոհությունները պետական մարմինների նկատմամբ ուղղում էին կազմակերպությանը՝ չհասկանալով, որ որոշումներն ու պատասխանատվությունը չեն վերաբերում կազմակերպությանը:
- Առաջարկություն: Պետք է կազմակերպել տեղեկատվական հանդիպումներ և ամրապնդել հաղորդակցության ընթացակարգերը շահառուների և պետական մարմինների միջև՝ նրանց համար պարզաբանելով գործառույթների սահմանները:

<u>Հոգեբանական աջակցության նկատմամբ անհամապատասխան հետաքրքրություն</u>

- Դժվարություն: Չնայած հոգեբանական աջակցության անհրաժեշտությանը, որոշ շահառուներ հրաժարվում էին մասնակցել այդ ծառայություններին՝ կարծրատիպերի կամ անտարբերության պատճառով:
- Առաջարկություն: Հաջորդ փուլում առաջարկվում է ստեղծել փոքր խմբային աշխատանքներ կամ անհատական հանդիպումներ, որտեղ մասնակիցները կկարողանան քննարկել իրենց խնդիրները ոչ փորմալ մթնոլորտում՝ կոտրելով առկա կարծրատիպերը:

<u>Շահառուների անձնական տվյալների գաղտնիություն</u>

- Կան բազմաթիվ ծրագրեր միտված Արցախից բռնի տեղահանված անձանց աջակցելուն, սակայն դրանց հետ միաժամանակ գործում են տարբեր զեղծարարություններ, և մեր շահառուներից շատերը լսելով կամ անմիջապես բախվելով այդ խնդիրներին՝ փորձում են հնարավորինս զգուշորեն մոտենալ ցանկացած ծրագրի, հիմնականում խուսափում են լուսանկարվելուց և շատ զգայուն են հեռախոսահամարների հետ, հաճախ խուսափում եմ տալ հեռախոսահամար, երբեմն էլ սխալ հեռախոսահամար են տրամադրում:
- Հաշվի առնելով այս խնդիրը՝ մենք պարբերաբար տեղյակ ենք պահում մեր գաղտնիության քաղաքականության մասին:

Եզրակացություն
Ծրագրի իրականացման ընթացքում ի հայտ եկած դժվարությունները հնարավորություն տվեցին վերանայել մոտեցումները և մշակել ավելի արդյունավետ մեթոդաբանություն: Առաջարկվող քայլերը նպատակ ունեն ամրապնդել ծրագրի ազդեցությունը և ապահովել շահառուների երկարատև ներգրավվածությունը:

- Ներկայացնել ծրագրի տեսանելիությանը վերաբերող արդյունքները: Տրամադրել մեդիա նյութերի հղումները (եթե առկա են): (առավելագույնը 150 բառ)
https://www.facebook.com/share/p/n5ZMEAGetqUxYjsg/
https://www.facebook.com/share/43UUt22c8NqCtwXp/
https://www.facebook.com/share/osMSjLX6drs4MSLt/
https://www.facebook.com/share/AGmWm6bZ6bBWwTNC/
https://www.facebook.com/share/p/uFShz4TtRpQ7FhQb/
https://www.facebook.com/share/uWXFzCF1n7eii7xH/
https://www.facebook.com/share/TRnyqpqkXx7EdNFj/

https://www.facebook.com/share/syhg6MuwZAgATjR6/
https://www.facebook.com/share/xnT7besc9EMAA6r5/
https://www.facebook.com/share/UfFdydHLHEKqJqgq/
https://www.facebook.com/photo/?fbid=535987639197707&set=a.133351769461298
https://www.facebook.com/photo/?fbid=538604725602665&set=a.133351769461298
https://www.facebook.com/photo/?fbid=541611478635323&set=a.133351769461298
https://www.facebook.com/photo/?fbid=544975838298887&set=a.133351769461298
https://www.facebook.com/photo?fbid=556431253820012&set=a.133351769461298
https://www.facebook.com/photo?fbid=562061393256998&set=a.133351769461298
https://www.facebook.com/share/v/1D4hdmU5iM/

- Նկարագրել, թե որքանով են կայուն և շարունակական տվյալ ժամանակահատվածում ձեռք բերված արդյունքները: (առավելագույնը՝ 200 բառ)

Հոգեբանական աջակցություն

- Շահառուների մի մասի հետ աշխատանքը շարունակվում է՝ ապահովելով նրանց հուզական կայունությունը:

Իրավաբանական աջակցություն

- Շահառուներից մի քանիսը դեռ սպասում են պետական մարմինների պատասխաններին, և թիմը շարունակում է աջակցել ընթացիկ գործընթացներին:

Մշակութային ծրագրեր

- Այժմ պատրաստվում ենք մշակութային ցուցադրության, որը նպաստում է շահառուների կապի ամրապնդմանը իրենց մշակութային ժառանգության հետ և խթանում սոցիալական ներգրավվածությանը:

Բիզնես պլանների զարգացում

- Բիզնես պլանների համար ակտիվորեն փնտրվում են դրամաշնորհային հնարավորություններ՝ ծրագրերը կյանքի կոչելու նպատակով:

Կապերի ամրապնդում

- Հաստատվել են ամուր կապեր շահառուների հետ, ինչը նրանց հնարավորություն է տալիս մտապես դիմել ընթացիկ խնդիրներով: Այս կապերը ապահովում են շարունակական աջակցություն և հիմք են հետագա համագործակցության համար: Կարիքների գնահատման արդյունքում վեր ենք հանել, որ շահառուները ունեն հիմնականում զբաղվածության ապահովման խնդիր:

Մեր շահառուներից ոմանց կյանքը էապես փոխվել է մեր հետ աշխատանքների ընթացքում, սրանք ներկայացված են հաջողված պատմությունների շարքում:

Դիլիջանի համայնքապետարանը և ՄՄԾ-ն մեզ համարում են հավասար համագործակիցներ Դիլիջանում վերաբնակեցված արցախցի բռնի տեղահանվածների հետ աշխատանքում, մենք մեր տվյալների բազան օգտագործում ենք նրանց հետ հնարավորին լավ արդյունք ստանալու, վերածածկերից խուսափելու համար:

